

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արմեն Աշոտյանի, Նաիրա Ջոհրաբյանի, Անահիտ Բախշյանի և Հեղինե Բիշարյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. 1-ին հոդվածում «իր ցանկությամբ» բառերն անհրաժեշտ է հանել՝ նկատի ունենալով, որ լրացումը կատարվում է պատգամավորի իրավունքները սահմանող հոդվածում:

2. 2-րդ հոդվածը «ղեկավարները» բառից հետո լրացնել «՝ Ազգային ժողովի պահպանման ծախսերի շրջանակներում:» բառերով:

3. 3-րդ հոդվածի՝

1) «ա» կետով առաջարկվող լրացումն «Առանձին» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «6.1» թվով: Բացի դրանից՝ անհրաժեշտ է համապատասխան լրացում կատարել նաև Ազգային ժողովի նախագահի իրավասությունները սահմանող «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածում.

2) «գ» կետով առաջարկվող լրացման վերջին նախադասությունն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով, որ թվարկված ոչ բոլոր կառույցների ներկայացուցիչներն են

պարտավոր «սահմանված ժամկետներում և ընթացակարգով պատասխանել» հանձնաժողովների հարցադրումներին: Առավել ևս, պարտավորությունների չկատարումը նրանց համար իրավական հետևանքներ չի կարող առաջացնել:

4. 5-րդ հոդվածում «հրատարակվել» բառն անհրաժեշտ է փոխարինել «հրապարակվել» բառով:

5. 1-ին, 3-րդ և 4-րդ հոդվածներով կատարվող լրացումների համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին՝ համաձայն որի նոր մաս, կետ կարող է լրացվել միայն լրացուցիչ համարով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս՝ հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Գ. Մալխասյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածում 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ «գ¹»-րդ կետ.

«գ¹) իր ցանկությամբ ընդգրկվել պատգամավորական բարեկամական խմբերում.».

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածում 2-րդ մասը լրացնել հետեւյալ նախադասությամբ՝

«Օրաթերթերի տրամադրման նախնական հայտը ներկայացնում են խմբակցությունների եւ պատգամավորական խմբերի ղեկավարները:»:

Հոդված 3. Օրենքի 21-րդ հոդվածում՝

ա) լրացնել հետեւյալ բովանդակությամբ «Ծ¹»-րդ մասով.

«Առանձին հարցերի մշակման կապակցությամբ, մշտական հանձնաժողովի նախագահը կարող է պայմանագրային կարգով հրավիրել ժամանակավոր փորձագետ(ներ)՝ համաձայն Ազգային ժողովի նախագահի սահմանած կարգի:»:

բ) 8-րդ մասը լրացնել հետեւյալ նախադասությամբ՝

«Օրաթերթերի տրամադրման նախնական հայտը ներկայացնում են մշտական հանձնաժողովների նախագահները:»:

գ) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 9-րդ մասով.

«9. Հանձնաժողովում քննարկված օրենսդրական ակտերի նախագծերի եւ այլ հարցերի քննարկման ընթացքում եւ դրանց արդյունքում առաջացած հարցադրումներով մշտական հանձնաժողովը կարող է դիմել կառավարությանը, պետական կառավարման լիազորված մարմիններին, տարածքային կառավարման մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական եւ միջազգային կազմակերպություններին եւ այլ իրավասու մարմիններին ու կազմակերպություններին: Նշված կառույցների ներկայացուցիչները պարտավոր են սահմանված ժամկետներում եւ ընթացակարգով պատասխանել դրանց կամ հիմնավորել մերժումը:»:

Հոդված 4. Օրենքի 26-րդ հոդվածում 8-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ «թ¹»-րդ եւ «Ժ¹»-րդ կետերով.

« թ¹) ներկայացնում է մշտական հանձնաժողովը.

«Ժ¹) կարող է հրավիրել ժամանակավոր փորձագետներ:»:

Հոդված 5. Օրենքի 32-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Լսումները կազմակերպող հանձնաժողովի որոշմամբ լսումների վերաբերյալ նյութերը կարող են հրատարակվել՝ այդ մասին որոշումը Ազգային ժողովի նախագահին ներկայացնելու եւ հավանության արժանանալու դեպքում»:

Հոդված 6. Օրենքի 112-րդ հոդվածի 4-րդ մասից հանել « Հանձնաժողովներին, խմբակցություններին եւ պատգամավորական խմբերին, ինչպես նաեւ դրանցում չընդգրկված պատգամավորներին հատկացվող ժամանակահատվածի հաղորդման թեման որոշում է Ազգային ժողովի նախագահը՝ հարցը նախապես քննարկելով տվյալ հաղորդմանը նախորդող շաբաթվա Ազգային ժողովի աշխատանքային խորհրդակցությունում:» նախադասությունը:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Հիմնավորում

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման վերաբերյալ

Ներկայացվող օրենսդրական նախաձեռնության նպատակն է հստակեցնել մի շարք կանոնակարգային դրույթներ, որոնք բավարար մեխանիզմներ չեն ստեղծել կամ դրանց պարզապես անդրադարձ չի արվել:

Մասնավորապես, մշտական հանձնաժողովները, խմբակցություններ, պատգամավորական խմբերը պետք է ապահովվեն օրաթերթերով, սակայն պարզ չէ թե ինչպե՞ս եւ ու՞մ կողմից է ընտրվում օրաթերթերի անվանացանկը: Նախաձեռնությամբ այդ լիազորությունը վերապահվում է հանձնաժողովի նախագահին, խմբակցության եւ խմբի ղեկավարը:

Հաջորդ լրացումը վերաբերում է խորհրդարանական լսումների արդյունքի առավել արդյունավետ օգտագործմանը: Խորհրդարանական լսումները համարվում են քաղաքացիական հասարակության հետ խորհրդարանի համագործակցության լավագույն ինստիտուտը: Հետեւաբար առավել հնչեղություն ունեցող եւ կարեւորություն ներկայացնող հարցերի քննարկման արդյունքները առավել նպատակային կարող են օգտագործվել, եթե դրանք նաեւ հրապարակվեն: Քննարկվող հարցի արդիականությունը եւ հրապարակման անհրաժեշտությունը պետք է որոշի ԽԼ կազմակերպող մշտական հանձնաժողովը:

Եվ վերջապես, օրենսդրական նախաձեռնությամբ առաջարկվում է կանոնակարգից հանել մի սահմանում, համաձայն որի, «Խորհրդարանական շաբաթ» հաղորդաշարի ընթացքում խորհրդարանական մարմիններին եւ ուժերին հատկացվող ժամանակահատվածի հաղորդման թեման որոշում է Ազգային ժողովի նախագահը՝ հարցը նախապես քննարկելով տվյալ հաղորդմանը նախորդող շաբաթվա Ազգային ժողովի աշխատանքային խորհրդակցությունում:

Մինչդեռ խորհրդարանը քաղաքական երկխոսությունների ինստիտուտ է եւ նշված նորմի առկայությունը կարող է դիտարկվել, որպես արտահայտվելու ազատության սահմանափակում: